ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՍԱՄ-ՍՈՒՐ ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/30 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
2	Գրասեղան - չափսերը՝ 1200x600x760մմ: Սեղանի աշխատանքային հարթության, կողապատերի (ոտքերի), հետնապատի և գզրոցի համար պետք է օգտագործվի լամինացված ՓՏՍ 18մմ հաստությամբ, գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Աշխատանքային հարթության եզրերը պետք է շրջափակվեն 1-2մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC), ոչ աշխատանքային հարթության եզրերը պետք է շրջափակվեն 0.4մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC): Սեղանի առջևը փակվում է 18մմ հաստությամբ ՓՏՍ-ով (դիմապատը)՝ որի չափսերն են՝ 1164x450x600մմ, որը տեղադրվում է սեղանի աշխատանքային հարթության տակից, եզրին հավասար և ամրանումում է աշխատանքային հարթության եզրին (տակից) և կողապատերի (ոտքերի) ներսի մասին: Կողապատերի (ոտքերի) լայնությունը՝ 570մմ: Կողապատերի (ոտքերի) եզրերը կշրջափակվեն 0.4-1մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC), իսկ հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին պետք է ամրացվի ոտիկներ՝ 5-6մմ բարձրությամբ: Սեղանի աշխատանքային հարթության վերևի աջ և ձախ եզրային անկյուններում համակարգչային տեխնիկայի լարերի համար պետք է տեղակայվի միջանցիկ անցքեր՝ տեղակայված փակվող խցաններով: Սեղանը կունենա առանձին, 4 անիվի վրա շարժվող գզրոց, չափսերը՝ 410x460x690մմ, երեք դարակներով համապատասխանաբար չափսերով՝ 130-150; 130-150; 250-350մմ, հնարավոր առավելագույն խորությամբ, միասնական փականով փակվող, դարակները բացվում և փակվում են փափուկ փակվող, անաղմուկ սահնակներով (սալյասկա): Սեղանը, կողապատերը (ոտքերը), դիմապատը, գզրոցը և պլաստիկե եզրաժապավենները պետք է լինեն նույն՝ ՓՏՍ-ի, բնափայտի երանգներով ոչ շատ մուգ գույնի:

	Դարակները պետք է ունենան օվալաձև կամ ուղիղ մետաղական բռնակներ, որոնց երկարությունը պետք է լինի առնվազն 100մմ: Միացումներն իրականացնել երաշխավորված և թաքնված ձգանների միջոցով: Նմուշը /նկար 1/ կցվում է: Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Ապրանքների տեղափոխումը, բեռնաթափումը, տեղադրումը և/կամ հավաքումը իրականացվում է Մատակարարի կողմից իր միջոցների հաշվին: Երաշխիքային ժամկետ է սահմանվում 365 օր՝ հաշված Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից, երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները Մատակարարը պարտավոր է շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Մինչև մատակարարումը ներկայացված ապրանքի նմուշները համաձայնեցնել պատվիրատուի հետ: Մատակարարման օրը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Նմուշ նկարը տրվում է զուտ ընդհանուր պատկերացում կազմելու նպատակով և չի կազմելու հետագայում կնքվող պայմանագրի մաս:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО САМ-СУР в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-25/30 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
2	